

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1953 թվականի հունվարի 1-ին Մայր Տաճարում ամանորի առթիվ տեղի ունեցավ հանդիսավոր սուրբ պատարագ, ամբողջ միաբանության և ժողովրդի խուռն բազմության ներկայությամբ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը։ Սուրբ պատարագի վերջում սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ գեղեցիկ կերպով բնորոշելով հաջողություններով և նվաճումներով պսակված անցած տարին և ջերմորեն ողջունելով նոր տարվա մուտքը։

***

Սույն թվականի հունվարի 3-ին գերաշնորհ Վահան արքեպիսկոպոսը, ուղեկցությամբ Մայր Աթոռի միաբան արժանապատիվ Տ. Նիկոլ ավագ քահանա Բավեյանի, մեկնեց Բաքվի թեմ՝ Բաքվում Ս. Մենդյան և Ջրօրհնյաց տոնակատարությունները ավելի հանդիսավորությամբ անց կացնելու համար։

Գերաշնորհ սրբազան հայրը Բաքվում Մենդյան և Ջրօրհնյաց տոնակատարությունները անց կացնելուց հետո մեկնեց Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսի՝ թեմական գործերը վերստուգելու և համապատասխան կարգադրություններ անելու համար։

***

Հունվարի 5-ին Մայր Տաճարում տեղի ունեցավ Ս. Մենդյան Ճրագալույցի երեկոյան հանդիսավոր սուրբ պատարագ, հավատացյալների մեծ բազմության ներկայությամբ։ Պատարագիչն էր արժանապատիվ Տ. Խորեն ավագ քահանա Շուշանյանը։

***

Հունվարի 6-ին՝ Ս. Մենդյան և Մկրտության օրը տոնվեց ամենայն հանդիսավորությամբ։ Տաճարը լի էր խուռն բազմությամբ։ Պատարագիչն էր գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոսը, որն իր հավուր պատշաճի քարոզում վեր հանեց Քրիստոսի մարդեղության համամարդկային նշանակությունը։

***

Հունվարի 5-ին և 6-ին տոնակատարությունների առթիվ Մայր Աթոռից Օշական մեկնեցին բարեշնորհ Նահապետ աբեղա Մուրադյանը և Աթոռի կրտսեր միաբան շնորհունակ Գուրգեն սարկավագը։

Տոներից անմիջապես հետո նրանք վերադարձան Մայր Աթոռ։

***

Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի ուսանողները ամանորի և Ս. Մենդյան տոների արձակուրդների կապակցությամբ մեկնեցին իրենց հարազատների մոտ։ Հունվարի 12-ին, արձակուրդներից հետո սկսվեցին կանոնավոր պարապմունքները։

***

Հունվարի 13-ին՝ Տիրոջ Անվանակոչության տոնի օրը, և հունվարի 15-ին՝ Ս. Հովհաննու Կարապետի տոնի օրը, մեծ շուքով տոնվեցին Մայր Աթոռում։ Երկու դեպքում էլ պատարագիչն էր բարեշնորհ Կոստանդին աբեղա Թառլանյանը։

***

Հունվարի 14-ին գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ուղեկցությամբ շնորհունակ Սարգիս սարկավագի, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, մեկնեց Հյուսիսային Կովկասի հայաշատ թեմը, Արմավիր քաղաքը՝ թեմական գործերի հետ ծանոթանալու համար։

***

Հունվար ամսվա ընթացքում, էքսկուրսանտների բազմաթիվ խմբեր (թե՛ արտասահմանից և թե՛ Սովետական Միության այլևայլ քաղաքներից՝ Մոսկվայից, Բաքվից և այլ քաղաքներից), այցելել են Ս. Էջմիածին՝ նրա դարավոր հնությունները ուսումնասիրելու և տեսնելու համար։

Այցելող խմբերին տրվում էին բազմակողմանի բացատրություններ՝ Մայր Աթոռի միաբանության կողմից։

***

Փետրվարի 1-ին Մայր Տաճարում, հանդիսավոր պատարագից հետո, Մայր Աթոռի հանգուցյալ ավագագույն միաբան Ռուբեն արքեպիսկոպոսի մահվան տարելիցի կապակցությամբ, պատարագիչ սրբազան հայրը իր մխիթարական խոսքերով վեր հանեց հանգուցյալի արժանավոր կյանքն ու գործունեությունը և սփոփեց նրա հարազատների վիշտը։

***

Փետրվարի 5-ին, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, թեմական գործերով Հյուսիսային Կովկասի և Նոր-Նախիջևանի թեմից Մայր Աթոռ էր ժամանել արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Չորչոփյանը։

***

Փետրվարի 7-ին Մայր Աթոռի միաբանությունը ներքին կարգով նշեց գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի քահանայական և հասարակական գործունեության 50 տարին։ Միաբանության կողմից հոբելյարին մատուցվեցին նվերներ։